



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16223

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հուլիսի 11-ի թիվ 108-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/68-Ա

**ՓԱՏՏԱԲԱՆ ԼԵՎՈՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ Պալատի կարգապահական գործերը համակարգող՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան՝ Լևոն Բաղդասարյանին (արտոնագիր թիվ 88) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

09.11.2016 թվականին Պալատում ստացվել է ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող**) դատավոր Հայարփի Զարգարյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 04.11.2016 թվականի որոշումը՝ փաստաբան Լևոն Բաղդասարյանի (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Որոշման մեջ նշվել է, որ թիվ ԵԿԴ/5818/02/15 քաղաքացիական գործով հայցվոր Արթուր Վարդանյանի ներկայացուցիչ Լևոն Բաղդասարյանը 02.11.2016թ. Դատական նիստում դատարանի նկատմամբ ներկայացրել է ինքնաբացարկի միջնորդություն այն պատճառաբանությամբ, որ Արթուր Վարդանյանը գտնվում է կալանավայրում անազատության մեջ, և դատարանի կողմից չի ապահովվել վերջինիս անձնական մասնակցությունը դատական նիստին, որով իր վստահորդը զրկվել է դատական պաշտպանական իրավունքից: Դատարանը, գտնելով, որ միջնորդությունն անհիմն, այն մերժել է: Դրան հետևել է փաստաբանի հայտարարությունը, որ իր վստահորդը լիազորել է իրեն մասնակցել դատական նիստին, եթե կապահովվի իր վստահորդի մասնակցությունը դատական նիստին:

Որոշմամբ նշվել է նաև, որ շարունակելով դատական նիստը՝ դատարանը պարզել է լիազորագրի չվերացված լինելու, հայցվորի կողմից շահերը ներկայացնելու որևէ արգելքի ամրագրման բացակայության հանգամանքները, որից հետո փաստաբանը հայտարարել է, որ բացարձակ ցանկություն չունի այս գործը այս դատարանում շարունակել: Հայտարարությունից հետո դուրս է գալու դատական նիստի դահլիճից և գնալու է այլ գործերով:

Որոշմամբ հայտնվել է, որ Դատարանը նախազգուշացրել է փաստաբանին այդպիսի վարքագծի հնարավոր հետևանքների մասին, որին փաստաբանն արձագանքել է, որ ավելի քան հարգում է դատարանը, որովհետև սա սիմվոլն է իր երկրի և պետության, բայց ցավում է, որ դատական իշխանությունը գտնվում է այդպիսի ողբալի վիճակում բխող բոլոր կործանարար հետևանքներով, բայց դա զլոբալ հարց է և վերաբերում է այլ հարթության վրա: Որից հետո դատարանը պարզաբանել է, որ նիստերի դահլիճից կամայաբար հեռանալը կարող է գնահատվել որպես անհարգալից վերաբերմունք դատարանի հանդեպ, սակայն փաստաբանն, այնուամենայնիվ, լքել է դատական նիստերի դահլիճը, որևէ նշանակություն չտալով Դատարանի պարզաբանմանն ու պահանջին:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 08.12.2016 թվականի թիվ 488-Ա/ԿԳ 16-223 որոշմամբ փաստաբան Լևոն Բաղդասարյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջի խախտման հատկանիշներով:

Տվյալ կարգապահական վարույթով դիմող է ճանաչվել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հայրփի Զարգարյան), կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Համլետ Ստեփանյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Դիմողը նախապատրաստման փուլում բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Հարուցված կարգապահական վարույթի կապակցությամբ Պատասխանողը բացատրություն է ներկայացրել Պալատ, որով հայտնել է, որ ինքը թիվ ԵԿԴ/5818/02/15 քաղաքացիական գործով ներկայացրել է հայցվոր Արթուր Վարդանյանի շահերը: Հայցվորը ցանկություն է հայտնել մասնակցել դատական նիստերին, որի մասին

ներկայացվել է միջնորդություն, սակայն դատարանը այն մերժել է: Մերժմանը հաջորդել է իր միջնորդությունը՝ դատավորի ինքնաբացարկի մասին, որը դատարանը մերժել է: Որից հետո հանդես է եկել հայտարարությամբ, որ նման պայմաններում առանց իր վստահորդի ներկայության անիմաստ է դիտում մասնակցելու դատաքննությանը, որից հետո նախագահողից թույլտվություն վերցնելով, ցտեսություն հայտնելով, պատասխան ցտեսություն լսելով, դուրս է եկել դատարանի դահլիճից:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Համլետ Ստեփանյանին, ով 29.05.2013 թվականին խորհրդին ներկայացրել է եզրակացություն:

26.09.2017թ.գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հուլիսի 11-ին, ժամը՝ 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հայարփի Զարգարյանի վարույթում քննվող թիվ ԵԿԴ/5818/02/15 քաղաքացիական գործով հայցվոր Արթուր Վարդանյանի ներկայացուցիչ է հանդիսանում փաստաբան Լևոն Բաղդասարյանը:
2. Պատասխանողը 02.11.2016 թվականի դատական նիստում ներկայացրել է ինքնաբացարկի միջնորդություն, որը մերժվել է:
3. Դրան հետևել է փաստաբանի հայտարարությունը, որ իր վստահորդը լիազորել է իրեն մասնակցել դատական նիստին, եթե կապահովվի իր մասնակցությունը դատական նիստին և բացարձակ ցանկություն չունի այս գործը այս դատարանում շարունակել, հայտարարությունից հետո դուրս է գալու դատական նիստի դահլիճից և գնալու է այլ գործերով:
4. Դատարանը նախազգուշացրել է փաստաբանին այդպիսի վարքագծի հնարավոր հետևանքների մասին, այդ թվում՝ սանկցիա կիրառելու դատարանի իրավունքի

մասին, որին փաստաբանն արձագանքել է, որ ավելի քան հարգում է դատարանը, որովհետև սա սիմվոլն է իր երկրի և պետության, բայց ցավում է, որ դատական իշխանությունը գտնվում է այդպիսի ողբալի վիճակում բխող բոլոր կործանարար հետևանքներով, բայց դա գլոբալ հարց է և վերաբերում է այլ հարթության վրա: Որից հետո դատարանը պարզաբանել է, որ նիստերի դահլիճից կամայաբար հեռանալը կարող է գնահատվել որպես անհարգալից վերաբերմունք դատարանի հանդեպ, սակայն Պատասխանողը թույլտվություն է վերցրել Դատարանից՝ լքել դատարանը և Դատարանի թույլտվությամբ հեռացել է:

5. 05.12.2016թ. դատական նիստի ընթացքում Պատասխանողը միջնորդություն է ներկայացրել՝ հետաձգել դատական նիստը և ապահովել իր վստահորդի ներկայությունը նիստին, քանի որ իր վստահորդը ցանկանում է պարտադիր անձամբ մասնակցել դատական նիստին և ինքը լիազորված է մասնակցել նիստին միայն իր վստահորդի ներկայությամբ: Դատարանը միջնորդությունը մերժել է, որից հետո Պատասխանողը խնդրել է թույլ տալ իրեն լքել նիստերի դահլիճը, Դատարանը թույլ չի տվել և նիստը շարունակվել է Պատասխանողի մասնակցությամբ:
6. Արթուր Վարդանյանի 07.06.2017 թվականի ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ա.Զոհրաբյանին ուղղված հայտարարության համաձայն՝ վերջինս տեղեկացրել է, որ տեղեկացված է Կենտրոն դատարանի կողմից փաստաբան Լևոն Բաղդասարյանի նկատմամբ սանկցիա կիրառելու և կանգապահական գործ հարուցելու վերաբերյալ: Այս ամիսների ընթացքում սպասել է, որ այդ գործի հետ կապված իրեն ևս կլսեն, քանի որ այն անմիջականորեն կապված է իր հետ: Տեղեկացրել է, որ պատվի, արժանապատվության այդ քաղաքացիական գործով վերջինս պարոն Բաղդասարյանին տեղեկացրել է, որ պարտադիր պետք է մասնակցի դատական նիստերին, քանի որ ցանկանում է ոչ միայն ներկա գտնվել, այլ նաև անձամբ տալ բացատրություններ և հարցեր ուղղել պատասխանողներին, որոնք իրենց գործողություններով ոտնահարեցին իր արժանապատվությունը:

Նշված փաստերը հաստատվում են Պատասխանողի բացատրությամբ, Արթուր Վարդանյանի հայտարարությամբ, դատական նիստի արձանագրության կրիչով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Լևոն Բաղդասարյանը փաստաբան է հանդիսանում 22.08.2001թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լևոն Բաղդասարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պարասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Այս կանոնը վկայակոչող (բլանկետային) է և ըստ էության հղում է կատարում փաստաբանի հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, մասնավորապես՝ ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխան իրավադրույթներին:

Սույն կարգապահական գործի հիմք հանդիսացած հանգամանքները տեղի են ունեցել քաղաքացիական գործի քննության ընթացքում, ուստի առաջացել են քաղաքացիադատավարական հարաբերություններ, որոնց առկայության պայմաններում պետք է կիրառվեն այդ ոլորտը կարգավորող վերաբերելի իրավանորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները կարող են դատարանում իրենց գործերը վարել անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Քաղաքացու մասնակցությունը գործին չի զրկում նրան՝ գործով ներկայացուցիչ ունենալու իրավունքից:

Նույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանում ներկայացուցիչ կարող է լինել դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի, բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի

բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց, ներկայացուցիչների և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.

1) նախազգուշացում.

2) նիստերի դահլիճից հեռացնելը.

3) դատական տուգանք.

4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով

համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատի դիմելը:

Սույն կարգապահական գործի փաստերից և դրանք հիմնավորող ապացույցներից բխում է, որ Պատասխանողը դատարանին տեղեկացրել է, որ իր վստահորդի կողմից լիազորված է դատական ներկայացուցչություն իրականացնելու միայն այն դեպքում, եթե վստահորդը ներկա գտնվի դատական նիստերին:

Այսինքն, կարելի է հանգել հետևության, որ վստահորդի կողմից փաստաբանին հանձնարարված գործի և դրա իրականացման լիազորությունների շրջանակը սահմանափակվել է վստահորդի՝ դատական նիստերին ներկա գտնվելու հանգամանքով: Այդ մասին է վկայում նաև Պատասխանողի վստահորդ Արթուր Վարդանյանի 07.06.2017 թվականի հայտարարությունը, համաձայն որի վերջինս հայտնել է, որ ինքն է հանձնարարել իր փաստաբանին գործի քննությանը մասնակցել միայն այն դեպքում, երբ ինքը նույնպես կմասնակցի դատական նիստերին:

Խորհուրդն արձանագրում է, որ քաղաքացիական գործերով փաստաբանը իրավասու է ներկայացվողի անունից կատարելու դատավարական գործողություններ, որոնց համար լիազորված է: Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ դատական նիստի ժամանակ և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար: Ի տարբերություն քրեական գործերով պաշտպանների կարգավիճակի, քաղաքացիական գործով փաստաբանը հանդես է գալիս վստահորդի անունից, դատավարական գործընթացում ինքնուրույն կարգավիճակով սուբյեկտ հանդես չի գալիս, և վերջինսի բացակայությունը չի խոչընդոտում գործի քննության ընթացքը:

Նման փաստերի և իրավակարգավորումների համադրության արդյունքում Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Լևոն Բաղդասարյանի գործողություններում բացակայում է Կանոնագրքի 4.1 կետով սահմանված կանոնի խախտում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 08.12.2016 թվականի թիվ 488-Ա/ԿԳ-16223 որոշմամբ փաստաբան Լևոն Բաղդասարյանի նկատմամբ հարուցված (արտոնագիր № 88) կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմող Երևան քաղաքի Կենտրոն և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին (դատավոր Հայարփի Զարգարյանին) և փաստաբան Լևոն Բաղդասարյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Հարություն Հարությունյան